ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԷՊՈՍԻ ԱՐԱՏՏԱ ԵՐԿՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Շումերական էպոսի այսօր հայտնի ինը պատումների (վիպերգերի) բնագրերը գտնվել են շումերների պաշտամունքային կենտրոն Նիպպուրից և թվագրվում են մ. թ. ա. XX—XVIII դարերով[1]։ Դրանցում նկարագրվող հասարակության և Միջագետքի տարբեր ժամանակաշրջանների հասարակական կառուցվածքների քննական համեմատությունից, սակայն, պարզվում է, որ վիպերգերում պատմվող դեպքերը պետք է կատարված լինեն մ. թ. ա. XXVIII—XXV դդ. ընթացքում[2]։ Ըստ «Շումերական արքայացանկի»՝ էպոսի հերոսներ Էնմերքարը, Լուգալբանդան և Գիլգամեշը, համապատասխանաբար, Ուրուկի առաջին դինաստիայի երկրորդ, երրորդ և հինգերորդ արքաներն են[3]։ Բազմաթիվ փաստեր հավաստում են այդ դինաստիայի պատմականությունը[4]։ Ուրուկի առաջին դինաստիային անմիջապես հաջորդած Ուրի առաջին դինաստիան տիրապետել է մ. թ. ա. 2500—2425 թթ.[5], հետևապես, տասներկու գահակալներից բաղկացած Ուրուկի առաջին դինաստիայի երկրորդ և երրորդ արքաներ Էնմերքարի և Լուգալբանդայի գահակալման ժամկետները պետք է թվագրել մ. թ. ա. XXVIII—XXVII դարերով։

Շումերական վիպերգերում բավական մեծ տեղ է գրավում Շումերի և Արատտա երկրի հարաբերությունների պատմությունը։ Այդ հարաբերությունների մասին են պատմում Էնմերքարին և Լուգալբանդային նվիրված վիպերգերը։ Գիլգամեշի մասին եղած պատումներից միայն մեկում է հիշատակվում Արատտա երկիրը (ասվում է այն մասին, որ աշխարհում միայն 7 հրեշներ գիտեն Արատտա երկրի ճանապարհը)[6]։ Տվյալ տեղեկության մեկնաբանությունը թողնելով մի այլ առիթի, քննենք միայն Էնմերքարին և Լուգալբանդային նվիրված չորս վեպերգերը։

Բազմաթիվ ուսումնասիրողներ Արատտա երկիրը տեղադրել են ամենատարբեր վայրերում։ Սակայն տեղորոշման բոլոր փորձերն էլ էական վերանայման կարիք են զգում։ Այդ փորձերն արվել են առանց վիպերգերի հաղորդած բոլոր տվյալների քննության՝ վիպերգերի այս կամ այն առանձին կամ մի քանի (բայց ոչ բոլոր) տեղեկությունների և այլ աղբյուրների համադրությամբ։ Տեղադրությունների մեծ մասը կատարվել է միայն «Էնմերքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգի տվյալների հիման վրա։ Այդ վիպերգում Սուղայի և Անշան երկրի հիշատակության պատճառով Արատտան տեղադրվել է Շումերից արևելք կամ հյուսիս-արևելք[7], իսկ լաջ-

---

[1] Вестник древней истории (ВДИ), 1964, № 3, с. 246.

[2] *Նույն տեղում։*

[3] Th. Jacobsen, Sumerian King List (Assyriological Studies, № 11, Chicago 1939, p. 84f).

[4] И. М. Дьяконов, Общественный и государственный строй древнего Двуречья. Шумер, М., 1959, с. 168—169.

[5] *Միջագետքի հնագույն պատմությանը վերաբերվող թվագրական տվյալները տե՛ս* Э. Бикерман, Хронология древнего мира, М, 1975, с. 175—185.

[6] S. N. Kramer, Gilgamesh and the Land of Living (Journal of Cuneiform Studies (JCS), I, 1943, № 1, p. 36).

[7] *Արատտան տեղադրվել է Իրանի տարբեր տարածքներում. այժմյան Լուրիստանի տարածքում* (S. N. Kramer, Enmerkar and the Lord of Aratta, Philadelphia, 1952, p. 3f.; С. Н. Крамер, История начинается в Шумере, М., 1965, с. 32; *հմմտ.* М. Белицкий. Забытый мир шумеров, М., 1980, с. 80—81, 91); *Կասպից ծովի և Ուրմիա լճի*

վարդ (լազուրիտ) թանկարժեք քարի հիշատակության պատճառով՝ մոտեցվել է լաջվարդի հանքերով հարուստ երկրամասերին կամ լաջվարդի տարածման նշանավոր ուղիներին[8]։ Արատտան տեղադրվել է նաև Հայկական լեռնաշխարհում[9]։

«Էնմերքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգը[10] չորս վիպերգերից ամենաընդարձակն ու ամբողջականն է։ Ըստ այս վիպերգի՝ Արատտան բարձր լեռնային երկիր է։ Ուրուկի արքա Էնմերքարը դեսպան է ուղարկում Արատտա, որի միջոցով հայտնում է իր կամքը. ճանաչել Ուրուկի գերիշխանությունը, ուղարկել վարպետներ՝ շումերական աստվածների պաշտամունքի տաճարներ կառուցելու համար և պահանջում է մետաղներ, թանկարժեք ու շինարարական քարեր։ Ահա թե ինչպես է նկարագրվում դեսպանի ճանապարհը.

165 Նա բարձրացավ փայլող (՞) լեռը,
Իջավ փայլող (՞) լեռից,
Պատանի երգասացի նման
168 Խոնարհվեց Սուզային և Անշան երկրին[11]
Հսկա լեռների վրայով,.....
Ու փոշու միջով նրա (Արատտայի գերագույն քրմի) մոտ գնաց։
171 Հինգ լեռ, վեց լեռ, յոթ լեռ նա անցավ,
Բարձրացրեց աչքերը, մոտեցավ Արատտային,
Ուրախ մտնելով Արատտայի հրապարակ
174 Իր տիրոջ մեծության մասին հաղորդեց...

Ինչպես վերը նշվեց, Սուզայի և Անշան երկրի հիշատակության պատճառով Արատտան տեղադրվել է Շումերից արևելք և հյուսիս-արևելք, որը ճիշտ չէ։ Դեսպանը մինչև ճանապարհ ընկնելը կատարում է փայլող լեռան հետ կապված ինչ-որ ծիսական արարողություն, ապա «խոնարհվում Սուզային և Անշան երկրին» (այդ երկրամասերի աստվածներին) և լեռների վրայով հասնում Արատտա։ Հիշենք, որ մեզ հասած տեքստերի գրի առնվելու ժամանակ Շումերը գտնվել է էլամացի արքաների տիրապետության տակ[12] և էլամական երկրամասերին «խոնարհվելը» վիպերգում կարող է լինել այդ տիրապետության հետևանքն արտահայտող ծիսական արարողության ար-

---

շրջանում (S. N. Kramer, The Sumerians. Chicago, 1963. p. 37, 42, 45, 258—259, 267, 275), էլամից արևելք ընկած լեռնային շրջանում (ВДИ, 1964, № 3, с. 247), կենտրոնական Իրանում (В. М. Массон, Средняя Азия и древний Восток, 1964, с. 233, 435), Դիալա գետի վերին հոսանքի շրջանում (E. J. Gordon, The Meaning of the Ideogram KASKAL.KUR-"Underground Water-course" and its Significance for Bronze Age Historical Geography (JCS, 1967, 21, p. 72, not. 9), Քերմանի և Ֆարսի տարածքում (J. Majidzadeh, The Land of Aratta (Journal of New Eastern Studies: (JNES), 1976, v. 36, № 2, p. 105—107, 111 f.). Ուրմիա լճից հարավ և հարավ-արևելք ընկած տարածքում (Ю. Б. Юсифов, Ранние контакты Месопотамии с северо-восточными странами (ВДИ, 1987, № 1, с. 21, прим. 14).

[8] Տեղադրվել է Ներկայիս Աֆղանստանի տարածքում (В. М. Сарианиди. Бактрия сквозь тысячелетия, М., 1984, с. 88; I. F. Hansman, The Questions of Aratta (JNES, 1978, v. 37, № 4, p. 336), Կասպից ծովից հարավ կամ հարավ-արևելք G. Herrmann, Lapis Lazuli: The Early Phases of its Trade (Irag, 1968, 30, p. 54):

[9] Մ. Գավուկյանը, հիմք ընդունելով Խուրրոմի՝ Շումեր-Արատտա ճանապարհին գտնըված լինելը, Արատտան տեղադրում է Հայկական լեռնաշխարհում (M. Kavoukjian, Armenia, Subartu and Sumer, Montreal, 1987, p. 65—72):

[10] Հոդվածում օգտագործվել է վիպերգի ամբողջական տեքստի Ի. Տ. Կանևայի կատարած թարգմանությունը (ВДИ, 1964, № 4, с. 190—225).

[11] Էլամի պատմության վաղ փուլերում Սուզան և Անշան երկիրը կազմել են էլամի ամբողջ տարածքը (В. Хинц, Государство Элам, М., 1977, с. 83).

[12] История древнего Востока, т. I, М., 1983, с. 340—341; История древнего мира, т. I, М., 1982, с. 135.

ձագանք և ամենևին կապ չունենալ ճանապարհի ուղղության հետ։ Մեր կարծիքը հաստատում է վիպերգի սկզբի հատվածը, որի համաձայն Ինաննա աստվածուհու պաշտամունքին նվիրված Ուրուկում գտնվող տաճարներից մեկը կոչվել է «Անշանի տուն»[13]։ Իսկ եթե էլամական լեռներին «խոնարհվելն» ունի ճանապարհին հանդիպող սրբավայրին խոնարհվելու նշանակություն, որը կապվել է Ուրուկի հովանավոր Ինաննա աստվածուհու պաշտամունքի հետ, այս տեղեկությունը չի կարող հիմք ծառայել Արատտայի տեղորոշման համար, որովհետև լեռներին կարող էին «խոնարհվել» առանց մտնելու էլամի սահմանները և ճանապարհը շարունակեին ամենատարբեր ուղղություններով։

Առավել անհիմն է լաջվարդի հիշատակության պատճառով Արատտա երկրի տեղորոշումը կապել լաջվարդի հանքերով հարուստ երկրամասերի կամ տարածման նշանավոր ուղիների հետ։ Վիպերգում լաջվարդի՝ տարբեր մակդիրների և ածականների հետ հանդես գալը, անշուշտ, հետևանք է շումերների մեջ այդ թանկարժեք քարի շատ հարգված լինելու։ Մի բան, որ արտացոլված է նաև շումերական այլ գրավոր հուշարձաններում։ Մետաղների և թանկարժեք քարերի պահանջը ստրկացման պահանջ է. լաջվարդ է պահանջում և՛ շումերացի արքան Արատտայից, և՛, մի այլ տեղում, Արատտայի արքան՝ Շումերից[14]։ Հետևաբար, լաջվարդի հիշատակությունը ևս տեղորոշման առումով արժեք չի ներկայացնում[15]։

Այս վիպերգում հանդիպում ենք Արատտայի մասին մի շատ կարևոր և հետաքրքիր տեղեկության։ Վիպերգի մեծ մասում պատմվում է երկու երկրների միջև տեղի ունեցող բանակցությունների մասին, որոնցից ակնհայտ է, որ այդ հարաբերությունները թշնամական են։ Եվ որքան էլ զարմանալի է, որպես մշտական մակդիր վիպերգում հանդես է դալիս «սուրբ օրենքների երկիր» (ըստ Ս. Քրամերի «աստվածային սուրբ օրենքների երկիր») արտահայտությունը[16]։ Փաստորեն, անկախ շումերների հետ ունեցած հարաբերություններից, Արատտա երկիրն ինչ-որ պատճառով շումերների համար համարվել է սուրբ։ Վիպերգից, սակայն, հնարավոր չէ հասկանալ դրա պատճառը։

Արատտա երկրի տեղորոշման համար կարևոր տեղեկություն պարունակող «Էնմերքարը և Էնսուքուշիրաննան» վիպերգը[17] պատմում է հետևյալը։ Երբ Շումերի և Արատտայի հարաբերությունները բավական սրվել էին (այս անգամ Արատտայի արքան էր ցանկանում Ուրուկի հնազանդությունը), արատտացի արքան ժողով է գումարում։ Այստեղ մի քուրմ արքային առաջարկում է իր օգնությունը՝ խոստանում է նավարկելով անցնել «Ուրուկի գետը», հպատակեցնել բոլոր երկրները՝ «վերևից ներքև, ծովից մինչև մայրիների լեռները» և վերադառնալ լի բարձած նավերով, այսինքն՝ հաղթանակած և հարուստ ավարով։ Արքան ընդունում է առաջարկը, սակայն արշավանքն ավարտվում է Արատտայի պարտությամբ։

«Ուրուկի գետով» Արատտայից Շումեր նավարկելու մասին տեղեկությունից հետևում է, որ «Ուրուկի գետը» պետք է կա՞մ հոսեր Արատտա երկրով, կա՞մ, առնվազն, լիներ այդ երկրի սահմանային գետը։ Ուրուկով հոսել է միայն Եփրատ գետը և, հետևաբար, Արատտա երկիրը պետք է որոնել Եփրատի հովտում՝ բնականաբար Շումերից հյուսիս։ Այս հույժ կարևոր տեղեկությանն ավելացնենք Արատտայի բարձր լեռնային լինելը («Էնմերքարը

---

[13] ВДИ, 1964, № 4, с. 205, стк. 12—13, прим. 6.

[14] Նույն տեղում, էջ 215, տող 411—412։

[15] Մետաղների և թանկարժեք քարերի պահանջը կովան չէ նակ այն պատճառով, որ պահանջի մեջ կարող էին նշվել ոչ թե այն մետաղներն ու թանկարժեք քարերը, որոնցով հարուստ էր Արատտան մ. թ. ա. XXVIII—XXVII դդ., այլ՝ վիպերգի գրի առնվելու ժամանակ առավել հայտնիները։

[16] ВДИ, 1964, № 4, с. 208, стк. 130, прим. 24, с. 210, стк. 224, с. 218, стк. 561.

[17] S. N. Kramer, From the Tablets of Sumer, Indian Hils. Falcon, 1956, p. 232—234.

և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգից) և «Ուրուկի գետով»՝ Եփրատով հյուսիս բարձրանալով փորձենք գտնել Արատտա երկրի տեղը։

Ուրուկից մինչև Արևելյան (Հայկական) Տավրոսի լեռները ձգվող տարածքը հարթավայրային է և ամենաբարձր կետում անգամ չի անցնում 1000 մետրից, ուստի և շումերների համար բարձր լեռնային համարվող երկիրն այդ տարածքում չէր կարող լինել։ Իսկ ավելի հյուսիս՝ Հայկական Տավրոսից մինչև ակունքները, Եփրատը հոսում է Հայկական լեռնաշխարհի արևմուտքով։ Նշանակում է, որ Արատտա երկիրը ևս մասամբ կամ ամբողջությամբ գտնվել է այդ տարածքում։

Հերոդոտոսը (մ. թ. ա. V դ.) հաղորդում է, որ Հայաստանից Եփրատով Բաբելոն էին նավարկում տարբեր չափերի առևտրական նավեր, որոնցից ամենամեծերն ունեին 5000 տաղանդ տարողություն[18], Մեկ հունական (ատտիկյան) տաղանդը հավասար է շուրջ 26,2 կիլոգրամի[19]։ Տաղանդները ժամանակակից չափերի վերածած՝ դուրս է գալիս, որ Հայաստանից Բաբելոն նավարկող ամենամեծ նավերն ունեցել են մոտ 131 տոննա տարողություն։ Հերոդոտոսը նույն տեղում նշում է, որ Բաբելոնում իր տեսածներից ամենազարմանալին Հայաստանից նավարկող հիշյալ նավերն էին։ Եթե չափազանցված էլ լինի նավերի տարողությունը, այնուամենայնիվ, Հերոդոտոսի հաղորդածը հաստատում է Հայկական լեռնաշխարհից դեպի Հարավային Միջագետք ռազմական արշավանք կատարելու հնարավորությունը։

Լուգալբանդայի մասին պատմող վիպերգերում ևս կարևոր դեր է խաղում Էնմերքարը։ «Լուգալբանդան և Էնմերքարը» վիպերգում[20] հիշատակվում է էլամական լեռներին «խոնարհվելով» և լեռներով անցնող ճանապարհը, որին ծանոթ ենք «Էնմերքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգից։

«Լուգալբանդան և Խուրրում լեռը» վիպերգը[21] ևս պատմում է շումերա-արատտական ռազմական հարաբերությունների մասին։ Էնմերքարը, շումերական զորքերի գլուխ անցած, արշավում է դեպի Արատտա։ Ճանապարհին, երբ բանակը հասնում է Խուրրում լեռ, Լուգալբանդան հիվանդանում և մեռնում է։ Թողնելով դիակը տեղում՝ զորքը շարունակում է արշավանքը, այն պայմանով, որ վերադարձին վերցնելով Լուգալբանդայի դին՝ տանեն թաղելու հայրենի հողում։ Այնուհետև վիպերգում պատմվում է, թե ինչպես է աստվածների բարեհաճության շնորհիվ Լուգալբանդան վերակենդանանում և ինչ արկածներ է ունենում։

Hurrum-ը խուրրիների երկրի անվանումն է[22] և տեղադրվում է Ջադրոսի հյուսիսային լեռնաճյուղերին, Վանա լճից հարավ-արևելք[23] (ուրարտա-

---

18 Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, էջ 79—80, հմմտ. Геродот, История в девяти книгах, Л., 1972, с. 73.

19 Геродот, История в девяти книгах, с. 546.

20 S. N. Kramer, From the Tablets of Sumer, p. 235—237.

21 Նույն տեղում, էջ 237—238։

22 Խուրրին խուրրիների ինքնանվանումն է։ Այդ անվամբ նրանք հիշվում են խեթական, Եգիպտական և հին եբրայական աղբյուրներում։ Շումերները խուրրիների երկիրը կոչել են Սու-բիր. աքքադերենում այդ երկիրը հանդես է գալիս Սուբարտու (կամ Շուբարտու) անունով, իսկ նրա բնակիչները կոչվում են սուբարեցիներ։ Սուբարտու երկրի տարածքը շարունակում էր կոչվել նույն անունով նաև այն ժամանակ, երբ այդ տարածքում այլևս խուրրիներ չկային, իսկ մ. թ. ա. VII—VI դդ. Սուբարտուն հանդես է գալիս որպես «Ասորեստան» անվան հոմանիշ։ Ամենայն հավանականությամբ այդ անվանումը ոչ թե խուրրիների, այլ մինչխուրրիական ժամանակներից Հյուսիսային Միջագետքին և Տիգրիսի արևելապատերին տրված տեղանուն է (И. М. Дьяконов, Языки древней Передней Азии, М., 1967, с. 114—120; его же: Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 113—119). Իսկ մինչև նրանց՝ Սուբարտուի տարածք գալը շումերները ևս, ամենայն հավանականությամբ, խուրրիներին կոչել են ըստ նրանց ինքնանվան, որտեղից էլ Խուրրում տեղանունը։

23 B. Hrouda, Die Churriter als Problem archäologischer Forschungen, Archaelogia Geographica, August, 1958, S. 14.

կան շրջանի Մուսասիրի շրջանում)։ Հետևապես, Արատտա երկիրը պետք է գտնվի Շումեր-Խուրրում գծի շարունակության վրա, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում, բայց այս անգամ ոչ թե Եփրատի հովտում, այլ Վանա լճից արևելք կամ հյուսիս-արևելք։

Չորս վիպերգերի տվյալների քննությունից տեսնում ենք, որ դրանք թույլ են տալիս Արատտան տեղադրելու Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արևմտյան շրջաններում։ Հարկ ենք համարում նշել, որ հնագիտական նյութը մ. թ. ա. III հազարամյակի առաջին կեսում նույնություն է ցուցաբերում ոչ միայն նշված տարածքներում, այլև ամբողջ լեռնաշխարհում և հարակից որոշ շրջաններում[24]։ Կարելի է հաստատ ասել, որ Արատտա երկիրը գտնվել է Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III հազարամյակի առաջին կեսի մշակութային գոտու տարածքում։

Ասորեստանի Սարգոն II արքան մ. թ. ա. 714 թ. դեպի Մանա և Ուրարտու երկրներ կատարած արշավանքի ժամանակ Մանա երկրի հարավում (Ուրմիա լճի ավազանի հարավում) հանդիպում է Արատտա անունով գետի[25]։ Եթե գետի անունը կապ ունի Արատտա երկրի հետ, ապա Արատտան ընդգրկել է նաև Ուրմիա լճի ավազանը, մի բան, որ հաստատում է վերը մեր արած եզրակացությունը (Ուրմիա լճի ավազանը մ. թ. ա. III հազարամյակի առաջին կեսում մտել է Հայկական լեռնաշխարհի մշակութային գոտու տարածքի մեջ)։ Գետի և երկրի անունների նույնությունը, սակայն, կարող է լինել պատահական։

Վերադառնանք «Էնմերքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգում իբրև Արատտա երկրի մշտական մակդիր գործածվող «աստվածային սուրբ օրենքների երկիր» արտահայտությանը։ Կարո՞ղ էր արդյոք Հայկական լեռնաշխարհը որևէ առումով սուրբ համարվել շումերների համար։

Շումերական գրավոր հուշարձանների վերծանվելուց հետո պարզ դարձավ, որ Հին Կտակարանի մի քանի տեքստեր բնագրեր չեն, այլ բխում են շումերական սկզբնաղբյուրից[26]։ Շումերական սկզբնաղբյուրից է բխում նաև Հին Կտակարանում պատմվող համաշխարհային ջրհեղեղի պատմությունը։ Շումերական բնագրի տեքստը շատ հատվածներում վնասված է, ինչը պարզ է դառնում Հին Կտակարանի օգնությամբ։ Շումերականում (վնասվելու պատճառով) բացակայում է այն վայրի անունը, որտեղ կանգ է առել ջրհեղեղից փրկվածների նավը, իսկ ըստ Հին Կտակարանի՝ տապանը կանգ է առել Արարատ լեռների վրա[27]։ Աստվածաշնչում Արարատ անունը տրվել է Հայկական լեռնաշխարհի տարածքին։ Կարելի է հետևություն անել, որ շումերական բնագրում ևս որպես ջրհեղեղից փրկվածների երկրամաս հանդես է եկել Հայկական լեռնաշխարհը (անկախ այն բանից, թե ինչ անունով կկոչվեր)։ Այդ երկրամասը, որ Հայկական լեռնաշխարհն է, պետք է համարվեր մարդկության վերածննդի վայր և, անկախ նրա բնակիչների հետ ունեցած հարաբերություններից, կարող էր (և պետք էր) շումերների համար համարվել սուրբ երկիր։

---

24 Հայկական լեռնաշխարհի մշակութային գոտու սահմանները հյուսիս-արևելքում ընդգրկել են «Կուր-արաքսյան միջագետքի» տարածքը, հարավ-արևելքում՝ Ուրմիա լճի ավազանը, հարավում՝ Հայկական Տավրոսի լեռները, իսկ արևմուտքում և հյուսիս-արևմուտքում սահման են ունեցել Անտիտավրոսի և Պոնտական լեռները (Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 168—171, է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 91, Ch. Burney, Eastern Anatolia in the Chalcolitice and Early Bronze age. (Anatolian Studies, VIII, 1958, p. 165—168).

25 ВДИ, 1951, № 2, с. 322.

26 S. N. Kramer, Sumerian literature and the Bible (Analecta Biblica, Roma, 1959, 12, p. 185—204).

27 Գիրք ծննդոց, 8, 4։

Այսպիսով, Արատտա երկիրը մ. թ. ա. XXVIII—XXVII դդ. գտնվել է Հայկական լեռնաշխարհի մշակութային դոտու տարածքում և աչքի ընկել զարգացած մշակույթով ու ռազմական հզորությամբ։ Այլալեզու և ավելի ուշ դարաշրջանների աղբյուրներում Արատտա տեղանվան հնարավոր զուգահեռների, ինչպես նաև արատտացիների էթնո-լեզվական բնութագրի խնդիրները հետագա հատուկ ուսումնասիրությունների առարկա են։

К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ АРАТТА В ШУМЕРСКОМ ЭПОСЕ

А. Е. МОВСЕСЯН

Резюме

В шумерских эпических песнях, тексты которых были найдены в Ниппуре и датируются XX—XVIII вв. до н. э., часто упоминается страна Аратта. О сношениях Шумера и страны Аратты в XXVIII—XXVII вв. до н. э. рассказывают эпические песни, восславляющие Энмеркара и Лугалбанду. Страна Аратта локализовалась исследователями к востоку и северо-востоку от Шумера. Исходя из данных эпических песен, страну Аратта следует локализовать на территории культурного региона Армянского нагорья первой половины III тыс. до н. э.

TO THE ISSUE OF THE LOCALIZATION OF THE ARATTA COUNTRY IN SUMER EPOS

A. E. MOVSESIAN

Summary

In Sumer epic songs, the texts of which have been found in Nippur and dated to XX—XVIII cc. B. C., the name of the country Aratta is often mentioned. Epic songs tell us about the intercourse of Shumer and the country of Aratta in XXVIII—XXVII cc. B. C. and sing Enmerkar's and Lugalbada's praise. The researchers localize the country of Aratta to the East and the North-East from Sumer. Proceeding from the facts of epic songs, the country of Aratta is to be localized on the territory of cultural region of Armenian upland on the first half of the III millennium B. C.